



Listen Respectfully, Work Collaboratively

## Խաղաղության արհեստը

### Հայ-թուրքական քարտաշ վարպետությանը ուղղված ծրագիր

#### Իրավիճակի նկարագրություն`

Թուրքիայի ու Հայաստանի միջև քաղաքական լարվածությունը շարունակվում է, չնայած վերջի տարիներին պետական մակարդակի վրա խաղաղության հաստատման փորձերին: 2009 թ. Անկարայի ու Երևանի միջև ստորագրված արձանագրությունների անհաջողությունը փաստում է, որ խաղաղությունը պետք է կառուցել համայնքային մակարդակի վրա: HasNa-ն նպատակ ունի Թուրքիայի ու Հայաստանի քարտաշ վարպետներին պլատֆորմ տրամադրել, որի միջոցով նրանք փորձի ու հմտությունների փոխանակում կիրականացնեն, միևնույն ժամանակ խթանելով խաղաղության գործընթացները, օգտագործելով ընդհանուր մշակութային ժառանգությունը:

Չնայած ներկայիս անհամաձայնությունների, Գյումրին ու Կարսը ընդհանուր ժառանգություն ունեն, որը միավորում է երկու քաղաքները: Այս միավորող ժառանգության ամենաազդեցիկ առաջնորդներն են քարտաշ վարպետները, ովքեր ջանում են պահպանել տարածաշրջանում համակեցության ֆիզիկական արտահայտությունը: Քարտաշ վարպետները, ովքեր վայելում են համայնքի հարգանքն ու ճանաչումը, ներուժ են հանդիսանում տարածաշրջանում խաղաղության համար ամուր հիմքեր գցելու գործում:

Մինչդեռ օդային սահմանը Երևանի ու Ստամբուլի միջև բաց է ու տարեկան 250 միլիոն ԱՄՆ դոլլարի առևտուր է տեղի ունենում երկու երկրների միջև, իրական սահմանը Գյումրիի ու Կարսի միջև մնում է փակ: Այս երկու համայնքներ են, որ առավելագույնս տուժում են քաղաքական խնդիրներից: Սրանք են ամենաձանր տնտեսական պայմաններում ապրող համայնքները իրենց երկրներում:

Երկու քաղաքները Ռուսական կայսրությանից ժառանգել են ինքնատիպ Բալթիկ ճարտարապետական ոճով կառուցված շինություններ, որոնք լուրջ ներուժ են հանդիսանում տեղական, միջսահմանային զբոսաշրջության տեսակետից: Չնայած, Կարսում պահպանված շենքերը շատ ավելի վաթթար վիճակում են, իսկ քարտաշության հմտությունները գրեթե մահացել են: Գյումրիում դեռ առկա է այս գիտելիքն ու հմտությունները, սակայն ապտեղի վարպետներին քիչ հասու է շինարարության ոլորտում կիրառվող նորագույն տեխնոլոգիաները: Հայաստանի ու Թուրքիայի վարպետները պատմական կառույցները պահպանելու ու վերականգնելու ուղղությամբ համատեղ ջանքեր են գործադրելու` երկրների ներքո ու միջսահմանային զբոսաշրջության զարգացման նպատակով, ինչը իր հերթին կբերի տարածաշրջանում տնտեսական զարգացման:

Ծրագիրը նպատակ ունի կապ ստեղծել քարտաշ վարպետների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ու վերանորոգման ոլորտում գործարարների միջև:

### **Խնդիրները՝**

- Փոխանակել քարտաշ վարպետության հմտությունները Կարսի վարպետներին ու ներկայացնել շինարարությունում նորագույն տեխնոլոգիաները ու նոր շուկաները Գյումրու վարպետներին;
- Խթանել Գյումրիի ու Կարսի տնտեսությունը պատմական շինությունների վերականգնման ոլորտում նոր կադրերի պատրաստման, հմուտ վարպետների, գործարարների ու քաղաքական գործիչների միջև կապ ստեղծելու, զարգացող զբոսաշրջության ոլորտը խթանելու միջոցով;
- Հայաստանի ու Թուրքիայի վարպետների համատեղ վերագանգնած հուշարձանների օրինակով համայնքի գիտակցությունը բարձրացնել պատմական ժառանգության վերաբերյալ:

### **Գործողությունները՝**

- Ծրագրի գործընկերները կհավաքագրեն 14 հոգանոց մասնակիցների խումբը, որը կազմված կլինի քարտաշ վարպետներից, վերականգնման ոլորտում գործարարներից, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներից;
- Խումբը երկու շաբաթ ժամկետով կմեկնի Վաշինգթոն, որտեղ կոմունիկացիայի ու խաղախության դասընթացների կմասնակցի, ինչպես նաև կուսումնասիրի ԱՄՆ –ում վերանորոգման փորձը;
- Մեկ շաբաթ տևող դասընթացներ կկազմակերպվեն Գյումրիում քարտաշ վարպետների համար՝ Կարսեցի վարպետները ձեռք կբերեն քարտաշության հմտությունները, Գյումրեցի վարպետները կտեղեկանան նորագույն տեխնոլոգիաների ու շուկաների մասին:

### **Համայնքի լուսաբանում**

- Տարածաշրջանային ճարտարապետական կոնֆերանսի կազմակերպում Կարսում, որտեղ կքննարկվեն ճարտարապետական տենդենցները, մշակութային զբոսաշրջության ու տարածաշրջանային համագործակցության զարգացումը: Կոնֆերանսին կմասնակցեն համայնքային ղեկավարներ, վերականգնման ոլորտի գործարարներ, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ, զբոսաշրջության ոլորտի ներկայացուցիչներ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:
- Ծրագրի արդյունքում կթողարկվի երկլեզու տպագրություն, որը կարտացոլի պատմական ժառանգության կարևորությունը, հուշարձանների վերանորոգման ուղիները, ֆինանսական ու տեխնիկական օգնության աղբյուրները և այլն:

## Արդյունքները՝

- Հայաստանի ու թուրքիայի քարտաշ վարպետների ցանց, որոնք տիրապետում են քարտաշության հմտություններին, նորագույն տեխնոլոգիաներին, համագործակցում են համայնքի ղեկավարների հետ, բաց են շուկայի համար;
- Համատեղ գործողություններ ուղղված հայ-թուրքական պատմական ժառանգության պահպանմանը, տարածաշրջանային համագործակցությանը, հասարակական հանդուրժողականությանը
- Պատմական հուշարձանների վերականգնման աշխատանքների խթանում ու բարելավում հայ-թուրքական համատեղ վերականգնման օրինակների հիման վրա
- Տարածաշրջանային տնտեսության խթանում միջսահմանային զբոսաշրջության զարգացման շնորհիվ:

## Գործընկերներ՝

- Քաղաքային Ուսումնասիրությունների Կենտրոն, Գյումրի: Աշխատանքի ոլորտներն են՝ պատմական ժառանգության պահպանություն, տնտեսական զարգացում ու համայնքային զարգացում:
- Kafkas Kultur, Կարս: Աշխատանքի ոլորտներն են՝ տարածաշրջանի պատմական ժառանգության պահպանություն: